TUMO
CENTER FOR CREATIVE TECHNOLOGIES

# #TUMO4Artsakh**Teens**

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՌՈՂՋԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԱՇԽ. ԵՒ ՍՈՑ. ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼՂ հայրենակիցները Տելեգրամում կարող են փնտրել 114 տեղեկատու (ԼՂ), ապա ընտրել հետաքրքրող ոլորտները և հետևելով քայլերին՝ ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝

- բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի
- 40+10 հազար դրամ պետական աջակցության ծրագրի,
- զբաղվածության ապահովման պետական աջակցության ծրագրի,
- կենսաթոշակների և այլնի վերաբերյալ:

Հարթակը գործարկել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ:

Մանրամասներին ծանոթանալու և դիմելու համար՝ https://t.me/mlsa114_bot

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կեցության և այլ ծախսերը հոգալու նպատակով՝ 2025թ հունվարից կգործի նորացված սոցիալական աջակցության ծրագիր:

Աջակցությունը կտրամադրվի հետևյալ չափերով՝

- 2025 թ. հունվար-մարտ ամիսներին տրամադրվող սոցիալական աջակցության ամսական չափը կկազմի 50,000 դրամ: Շահառուների շրջանակը կլինի գրեթե նույնը՝ ինչ 2024 թ. ընթացքում չի գործի միայն 10,000 դրամ աջակցության բաղադրիչը, որը տրամադրվում էր ՀՀ-ում սեփականություն ունեցող անձանց:
- 2025 թ. ապրիլ-հունիս ամիսը ներառյալ աջակցության չափը կկազմի 40,000 դրամ՝ հետևյալ առանձին խմբերի համար՝
- մինչև 18 տարեկան երեխաներ կամ պարտադիր կրթություն ստացող 18 տարին լրացած անձինք,
- 63 և ավելի տարեկաններ,
- կերակրողին կորցրածներ կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց:
- 2025 թ հուլիս-դեկտեմբեր ամիսը ներառյալ աջակցությունը կշարունակվի 30,000 դրամի չափով՝ վերևում նշված շահառուների խմբերի համար:

Եթե ԼՂ հայրենակիցներն արդեն իսկ օգտվում են 40+10 աջակցության ծրագրից, ապա 2025 թ. նոր դիմումներ ներկայացնելու անհրաժեշտություն չեն ունենա:

# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏ. ԾՐԱԳԻՐ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց Հայաստանի Հանրապետությունում երկարաժամկետ բնակության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով գործարկվել է ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը:

Մանրամասներին ծանոթանալու և դիմելու համար՝ https://bit.ly/3WwhR5f